

ՏՆՕՐԷՆ - ԽՐԱՍԱԳՐԱԳՈՒՅ

Հ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺՆԱՆՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏՄԻՐԵԱՆ	500 ՂՐԵ
ՎԵՑԱՍՏԵԱՅ	250 »
ԵՐԱՍՏԵԱՅ	150 »

Բաժանորդագրութիւնը կ'սկսին
ամեն ամսոյ 1 ին և 15 ին

100 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Fondateur

M. Mamourian

Directeur-Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVÉLIAN MANOUL,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ



ԳԵՐ. Տ. ՄԱՍԹԵՆՍ ԵՄԻՍԿՈՊՈՍ ԻՆՃԵՆԱՆ

Զորեքշաբթի առաւօտ «Գարջպատ» համաձայնական շոգեհատով մեկնեցաւ Պոլիս Իգմիրի նախորդ առաջնորդ Գեր. Տ. Մասթէնս Եպս. Ինճէեան:

Շուրջ ինն տարի տեւեց և Ս. պաշտօնավարութեան շրջանը, Իգմիր հասած ըլլալով 1910 Օգոստ. 3ին, աչկոծեալ ու արիւնոտ օրերու մէջ:

Հաս մտադիր չենք Ինճէեան Սրբազանի իննամեայ թեղմուտը պաշտօնավարութեան համարապատկան ընկելու:

Բոլոր Իգմիրցիներն գիտեն զայն ու վայելած են այդ պաշտօնավարութեան բարեբար ազդեցութիւնները:

Ոմանք ծանօթ ու գիտակ ըլլալով անոր՝ մասնաւոր գիտումով կ'ուզեն անգիտանալ, այդ իրենց գիտնալիքն է, խզի խնդիր, մտայնութեան ու նկարագրի փոփոխ պարագայ:

Իսկ Իգմիրի հայութեան մեծամասնութիւնն չկրնար անանել ու ուրանալ թէ Տ. Մասթէնս եպ. աննախընթաց ձեռնհասութեամբ, մանաւանդ խիստ զըմաւորն պարագաներու մէջ յաջողած է խողողեցնել Իգմիրի հայութեան պառակտեալ վիճակը և ազգային գործոց քառային վիճակին դարձան զին իր հեղինակաւոր և ազդու ուղղութեամբ:

Այսօր իր գաղափարի ու սկզբունքի նախապայտորդներն անգամ, անոնք որ յետին մտքեր չունին ու կանխակալ գաղափարներով չեն պաշարուած, կ'իստատովանին թէ՛ Ինճէեան Սրբազանի պաշտօնավարութեան շրջանն շատ արգիւնաւոր եղած է և ազգային բոլորը, անոր շնորհիւ մեծամեծ պարագրէ ձերբադատուած և ստացած է աննախադրու լիճակ մը:

Իգմիր երկու կողմը առաջնորդներ ունեցած է. Միջինեղեկ Սրբազանն և Մասթէնս Սրբազանն, բայց հակառակ առաջնորդն անվիճելի կարողութեան, այնպէս համոզուած ենք, որ եթէ Միջինեղեկ՝ Ինճէեանի պաշտօնավարած շրջանին Իգմիրի առաջնորդ ըլլար, չպիտի յաջողիր իր բմբռնած կերպով գործունէութիւն մը ունենալ և պիտի վիճէր, մինչդէռ Տ. Մասթէնս Ս. ի վաստակութիւն ներշնչելու անզուգական ձիրքին կ'միացնէր նաև կարող զիստանդիտութիւն մը, որու շնորհիւ կրցաւ լուծել անհամեմատօրէն ծանր կնճիւղներ ու գիմաղրուել անարկու փոթորիկներու:

Այսօր Իգմիրի հայութեան 3/4 մասը անհուն երախտագիտութիւն մը ունի առ Ն. Սրբազանութիւն, որովհետեւ իր կեանքն անոր կ'պարտի և ինչ որ ալ ըսուի, ինչ որ ալ յեղեղուի, ինչ աներևակայելի առարկութիւններ ու սեւաքրէքներ ալ հնարուին՝ Տ. Մասթէնսի ապ. ինչպէս քանիցս կրկնած է, իր կեանքին ամենայն գործն ըրած ըլլալու խզի կատարեալ հանգարտութիւնն ունի և տասն և հինգ հազարի մօտ հայութիւն մը փրկել իր փառաց լուսապլանկը կ'համարի:

Իգմիրի հայութիւնն ցմահ երախտագիտութեան զգացում մը պիտի տածէ հանդէպ Ն. Սրբազանութեան որու կ'պարտի իր և իրեններու կեանքն ու հարբստութիւնն, պատեն ու գոյութիւնը:

Մեկնեցաւ Ինճէեան Սրբազան, շրջապատուած քանի մը բարեկամներէ ու մտերմներէ՝ որովհետեւ բացարձակապէս մեծեց ամեն պատիւ ու ցոյց, սովորական տեղիքներ ու ձեւակերպական կեղծիքներ, որոնք ի գործ կ'ընդունին արժանաւորին ու անարժանին հաւասարապէս:

Անգամ մըն ալ Իգմիրի հայութեան կողմէ ոչլիքի կ'մտածենք Ն. Սրբազանութեան, որու յիշատակն, որու արժանիքին, որու ձիրքերն իրեն մարդ, իրեն եկեղեցական, իրեն զիստանդէտ, իրեն ընկերական մարդ և մանաւանդ իրեն բարեկամ երբէք չպիտի կրնան մոռացուիլ տարիներու հորովումով:

Հ. Մ.

ԵՂՐԱՑՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Օր մը նախնի յոյն իմաստասէրներէն Զենոնի կը ներկայանայ Կիրենացի խափշիկ մը, և կը սկսի իր խելքէն վեր բաներու վրայ, այսինքն հողույ անմահութիւնէն ճառելը Մեր սակաւաբաւ փրկիտփան ձայն չի հաներ, սանկ մէջ մը սեւամորթին կերպարանքին կը նայի, բերել կուտայ հայելի մը և նային ձեռքը տալով կ'ըսէ. նայէ մէջը, ու ըսէ ինձի որ ատանկ բանի մը վրայ խօսել կը վայելէ՞ քու զէմքիդ:

Մենք ալ հիմա նոյն խօսքը շատ իրաւար կրնանք ըսել մեր այն թուրք քաղաքագէտներուն, որոնք եւր են նորէն այս օրերս մեզի «եղբայրութիւն» քարոզելու շին յանկերզն է որ կը կրկնեն. Նեզը մնացի՞ր քաղաքականապէս, անա կը զիմեն այս զէնքին՝ այսինքն շողջորթութեան:

Թեան, որով այսքան գարեթէ ի վեր խորեցին ու զեռ կ'ուզեն խաբել իրենց զիւրահաւան հպատակները: Եղբայրութիւն. ինչ զոսմ ըսու ձիւզ այս նիւթին վրայ խմբագրական մը ունի Միտիլի մէջ հրատարակուող յունարէն Սուլթիթի թերթը, զոր ստորեւ թարգմանել յարմար գտնեցին:

Ահա թէ ինչ կը գրէ Սուլթիթի. «Տեսակցութեան մը մէջ, զոր ընդունեց շեյխն Կառավարութեան մէկ անբացատրելի թղթաւորութեամբ զեռ Իգմիրի մէջ մտացող կուսակալ Իզդիթ պէյը, ըսած է ի մէջ այլոց և հետեւեալը»:

Ձեռնակայն մէջ պարտք կը ծանրանայ մեր վրայ այստեղ, որ երկու ժողովուրդները իրարու հետ հաշտեցնելու, եղբայրացնելու աշխատիքը Գովութեան արժանի են արգարե այս մասին Պ. Սթիլիտարի, Պ. Նիտէրի և միւս յոյն սպաններուն թանկած ծանր:

քերք եւ ևս կը նախատեսուի արգէն, որ պիտի ըլլայ այս եղբայրացութիւնը եւ պիտի մոռցուի անցեալը: Սիրով պիտի ապրինք երկու ժողովուրդներս իրարու հետ, վասնզի, ինչ բան թիւնչպէս հակցնեմ, այլևս իրարու հետ չտղտած ենք. այսքան գարեթէ ի վեր միասին կ'ապրինք կոր Պիտիհաշտելիք, այսին կըբայրացիք անպատճառ, քանի որ այս կը պահանջէ թէ՛ Տոմկոստանի շահը և թէ Յունաստանի՝ որ չի կրնար այլևս խաղաղութեամբ ապրիլ Տուրքիայ և Սերպիոյ հետ»:

Ի սկզբան վախի՛ն այս յայտարարութիւնները կը գահացնեն անապատ կոյս հելլէն հանրային կարծիքը, ըստ որում ինք ունոյր կը փախաքի և այս բանն է որ արգէն կը հետապնդեն Փոքր Ասիոյ մէջ զանուզ հելլէն քաղաքական ու զինուորական իշխանութիւնները:

Բայց արդե՞ք տալի՞ն անգամն է որ պաշտօնական թուրքի մը բերնէն այս տեսակ յայտարարութիւններ կ'ելլին, ու կը հրապարակուին այսպիսի նախատեսութիւններ ու մտղմանքներ:

Մոռցուեցա՞ւ սահմանադրական Էթիմի թուրք պետերուն, օսմ. խորհրդարանի զանազան կուսակցութեանց չէֆերուն, վերջապէս թուրք մամուլին այն հսելիտա որ խոստումները, որոնք արքայութեան պիտի վերածէին թուրքի մէջ սպարդ յոյն և հայ տարրին կեանքը:

Այն ազուոր ազուոր խօսքերուն սակայն՝ ինչ շաջորդեց քիչ յետոյ շարկ կ'ոյ կրկնուի...

Եւ զեռ վերջերս, թուրքի սարսաղութիւնն ևս ինչ էր թուրքերուն Ռունաց հանդէպ վարմունքը: Դեռ այսօր, այսօր ինչ շահատակութիւններ չեն գործուիր Փոքր Ասիոյ մէջ ի վնաս յոյն ազգի...

Ալ զազրած ենք զիւրահաւան ըլլալէ:

Չենք՝ կարծեր որ անգամ մը ևս մեր Իգմիրի ազգակիցները, որոնք զժրագորար մէկ անգամ չխաբուեցան 1919 Մայիս 2էն ի վեր, հրաւիրելով իրենց զիւրահաւանութեամբ որ աւէաներ Փոքր Ասիոյ զժրագ շեյխութեան վրայ:

Իզդիթ պէյի գաւազնութիւնները և յոյն իշխանութեանց մասին ըրած չո. զրքթութիւնները զի թէ այնչափ կատկածատ կ'ընեն մեզ, որ կ'տարբերէ խորհիլ, թէ արդե՞ք նոր շարիք մը կ'սպաննայ իեղծ Յոյներուն զլիտն»:

Եղբայրացութիւն պիտի չըլլայ չէ՛ պիտի ըլլայ, բայց ան ատեն՝ երբ կարելի ըլլայ Փոքր Ասիոյ վերջնապէս ան ըստ պաշտօնական թուրք քաղաքագէտներն ու զինուորականները, որոնց մէկ կողմէն հակահելլէնութիւնը չափ ու սահման չունի, միւս կողմէ անձնական շահերն կը պահանջէ որ թուրքի շարունակ անիշխանական և անկարգ վիճակ մը ունենայ և երկին քաղկացուցիչ տարրերուն միջև վիճերն ու ատելութիւնները մշտնջենաւորին:

Եղբայրացութիւնը պիտի ըլլայ, և չի կրնար չըլլալ:

Բայց պիտի սկսի այն օրէն, երբ այս կիլէնութիւնը հետանան Փոքր Ասիոյն, ընդունելով այն փոխադարձ պատիւները, որոնց արժանի կը կուցուցանէ իրենք՝ իրենց անկեղծութիւնը և անմոռանից քաղաքականութիւնը:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՅ «Լա Բեֆորմ» թերթը ամերիկեան յանձնարարներն քննութեանց վրայ հետեւեալ ծանօթութիւնները կուտայ. «Իրողութիւնները այնպէս ցոյց կուտան թէ, ըլլայ Պաղեստինի, Լիբանանի կամ ծովեզերքի քաղաքներուն մէջ, տեղական զինուորական իշխանութեանց կողմէ ոչ մէկ ճնշում եղած է բնակչութեանց վրայ, անոնց քուէն ստանալու համար Այսպէս, Պաղեստինի մէջ որ կը ղեկավարուի անգլիացիներէ, քրիստոնեաները պահանջած են Տրանսայի խնամակալութիւնը, իսկ ծովեզերքին կողմը զոր Տրանսայի կը ղեկավարեն իսլամներու կարեւոր մաս մը պահանջած է շիճազի միացում: Իսլամական մէջ քրիստոնեայ բնակչութեանց վրայ աններելի ճնշում մը բանեցուցած են անոնց ազդիւղու համար Տրանսայի պաշտպանութիւնը ինչպէս կարգ մը գիւղերու մէջ, իշխանութեան գործակալները վեցհարուածեաներով կը բռնանային բնակիչներուն, որպէսզի իրենց զգալուներուն հակառակ բաղձանքներ ստորագրեն յոյնիսկ, Իսլամական մէջ, ամերիկեան յանձնարարներն բնակած չէին անկեղծ մարդիկ կ'սպասէին, սպանուու համար ամեն անոնց, որոնք կը փախաքէին Տրանսայի խնամակալութիւնը: Բարաքին շիճազեան իշխանութեան պատուիրակները հետեւեալ կերպով արտայայտուած են ամերիկեան յանձնարարներն առջև. «Մենք չենք ուզեր ոչ մէկ եւրոպական խնամակալութիւն. բայց եթէ համաժողովը կը յամառի իր տեսակէտն վրայ, մենք կը պահանջենք ամերիկեանը, և ամեն սարագայի՝ մենք չպիտի ընդունինք Տրանսայի Արդեօք Ամերիկայ, ինչ որու Տրանսայն տեղի Ուրիոյ համար, և ինչո՞ւ այս յայտնի տակալութիւնը ազգի մը հանդէպ որուն վեհանձնութիւնը և հերոսութիւնը ստանց արարաւարհ և որուն մտաւորական ազդեցութիւնը, Իսլամական մէջ առաջինն եղած է»:

Պաղեստինի, Լիբանանի մէջ և ծովեզերքին կողմը, տեսարանը՝ աւելի սփոփարար է: Գիտեն թէ Տրանսայ Պաղեստինի համար ոչ մէկ տեսակէտ ունի մեր բնակչութիւնը ազատօրէն և վաստակող քուէտեղի ի նպատակները: Նշանակելի միջոցառւել և օտանահան հոն Բնակիչները անկեղծօրէն արտայայտած են իրենց բողձանքը և ամեն ինչ կարծել կուտայ թէ, համաժողովը նկատի պիտի առնէ զանոնք:

Պէյութի և Լիբանանի մէջ բնակչութեան բոլոր մեծամասնութիւնը ստանեցած է շիճազիցներու բռնած ընթացքն կողմակիցաբար է շիրմագին համակրանքի ցոյց մը հանդէպ Տրանսայի. «Չկ հետ Տրանսային կ'իստակիք, բայց թէ Պէյութի եպիսկոպոսը, ամերիկեան յանձնարարներն, որպէսզի ցոյցանք թէ մեր արտուղբադրականութիւնը կը պարտինք Տրանսային: Իսկ քրիստոնէական միութեան մը ներկայացուցիչը սպաս խօսած է. «Ինչ է չունենալ քրիստոնեական խնամակալութիւնը, պիտի ստիպուինք իրեն մեր երկիրը և երկուս հետակալ»:

ԵՐԵՎ ԵՐԵՎՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

4. Պոլիս 20 Օգոստոս 1919

բանարաններու պէս, և գործարար միջոց չափանոցով անարգաս թե նկն»:

Պէքէրկի մէջ, որոնք ներս ապա- րիարքը բազմած 12 երկրակտուներու և 60է աւելի երեւելիներու միջև, որոնք Լիբանանի բոլոր կուսակցութիւնները և կրօնքորեր կը ներկայացնէին, լսուած է ամերիկեան յանձնարարներն կողմէ: ասորիւրքը պահանջած է Միւս-Լիբանան մը, քանի որ անոնք խնամակալութեան սակ միակն է որ մեր, աւանդութիւններուն, մեր բարձունքներուն և մեր զգացումներուն կը յարմարի: Այս յայտարարութենէն յետոյ յանձնարարներն նախագահը դառնալով էրր Փուստ Ասլանին, և տիրելի շէյխներուն, հարցուցած է անոնց կարծիքը: Անոնք մեղաբարան կը պատասխանեն:— Մենք նոյն կարծիքն ունինք ինչ որ ունի Գեր. Պատրիարքը, ան միայն կը ներկայացնէ Լիբանանը: Վճռակէտ կը տեղեկացնեն թէ եւրոպական հեռագիրները, որոնք փոփոք կը յայտնեն որ Ամերիկա ընդունի Հայաստան յանձնառութիւն չեն գտնուցուցած ձեր կողմը, մասնաւոր որ Մր. Լէնտինկ հաստատած է թէ Մ. Նահանգները այս կարգի յանձնառութեան մը ստանձնումն իսկ ինչպէս առարկայ չեն ըրած: Մր. Լոթ, պերճախօս ճառ մը արտասանեց, պահանջելով որ Ամերիկա ետ կենայ եւրոպական բարդութեանց մէջ խոսնուի: Հաւանութեան ցոյցեր և ճշմարիտ փոթորիկ մը յառաջ եկաւ ատեններուն մէջ: Ամերիկա անտարտառութեանց մըն է ամերիկեան ձերբակոյտին պատմութեան մէջ:

Ազգային Անցուցարար

Տեղապահ հայրը առջի օր այցելած է անդրախան և Ֆրանսական հիւպատոսներուն և երէկ խոսակցողն, Ֆրանսական և յունական ներկայացուցիչներուն և անոնց ներկայացուցած է, Չորսերու ժողովին անդամներուն զըրկուելիք հեռագիրները: Եւ այցելութեանց միջոցն բոլոր հիւպատոսներն ալ, ի մասնաւոր իտալական և յունականը շատ սիրտիւր վերաբերում մը ունեցած են Տեղապահ Հոր իտալական հիւպատոսը՝ Պ. Գարրօ Մէնի, խօսք տուած է օգնել Ապարթա և շրջակաները վերագա ձող նա փոխըտականներու հեռագրելով Ատալիոյ իտալական իշխանութեանց որ ինքնաշարժեր արամադրեն հոյ փոխըտականներուն: Այս այցելութեանց միջոցին Տեղապահ Հոր ընկերացած են հայ կաթողիկոսներու կողմէ Հայր Վարդան և բողոքականներէ Վեր. Թարագճեան:

— Քաղ. ժողովը իր նիստը կողմից նախագ. Տ. հօր ներկայ էին, Պ. Պ. Մ. Ս. Ռուքեան, Յ. Հարեհ, Վ. Էլմասեան և Յ. Կիլիկեան: Տեղապահ Հայրն համաձայնական տեղոյս ներկայացուցիչներու մօտ ըրած զիմուցներու մասին տեղեկութիւններ հարցոյցեց ապա ժողովը զբաղեցու պիտոճէի խնդրով և նկատի առաւ Տեղապահ հօր և Պ. Հարեհի ուսումնասիրութեանց արդիւնք և որոնց ներկայիլ Գաւառ. ժողովը Վաւերացուց կէօզ թէ քիչ թաղականութիւնը ընտրութեան Պ. Պ. Գ. Տիլպեր, Մ. Գալիփօճեան, Ս. Բիւրտեան, Ա. Եւզըճեան, Մ. Փափազեան:

Էտեմիլի մէջ սպաննուած Եօզդացի Վազէր Յակոբեանի սպաննութեան մամբանանութիւնց տեղեկացաւ Պ. Ս. Մ. Իփիքեան իզմիւրէ մեկնած ըլլալով իր հրամարականը կուտար Նպաստահաւար յանձնառուը կողմէ պատմութեան թեմէ, ժողովը որոնց քրիկ նոյն յանձնառու ժողովին նոր գանձակետի մը ընտրութեան համար: Նորոնոր Ազգաստիւնամը խնդրած էր 300 ուկուց փոխառուութիւն մը, Տեղապահ Հոր պաշտօն սրուեցաւ ընել հարկ եղածը:

— Բշտաւատ Տանիւկ շոգեհարու վերսայլէն քաղաք հասաւ Պատրիարքան սանուհիներէն Օրք. Նուարգ

անոնք առաջ տած էին արդէն ստանգը, չափան իրենց դատարարը 1916-ի և 20-րդ պաշտօններով կը մնային հուն:

— Տարագրելոյ կողմէ յանձնարարութիւնը գրեթէ կ'հարգուի հետեւալը: Վերջին անգամ կը քանուցանենք Սզմիրի բոլոր հոյ պաշտօնական մարմիններուն, իզմիր համադ և անիլ անցնող բոլոր հայրոն թէ՛ յանձնառու Վ. Քոչմուրէ-Է ԷՄԷՎ քաղաք վերապարձողութեան հոգիւր տանելու պաշտօն ունի: Այս հանգամանքը չունեցող որ և է յանձնարարեալ կամ ներկայացող հայրուն խնդրանքները անխելի պիտի ըլլան:

— Կ. Որբանոցին Պ. Միլալաքի Հաճի Էֆոթախու 3 ո. կ'ունի Սովհանէն Պալապանի մահուան տարի (Ք. Ս.):

— Ազգայնց Որբանոցին նուիրած են Պ. և Տ. Ս. Մեխիբեան 3 ո., Պ. և Տ. Ն. Երեսեան 4 ո., Պ. Տ. Բովակիմեանի ամուսնութեան տարի: Տ. Մաղաքեան 4 ո. խաղող, Պ. Օ. Կիլիմէզեան 5 ո. միս, 5 ո. խաղող, Պ. Ստեփան 2 քմաքեան 15 ո. խաղող, Պ. Ս. Մէզլըճեան 15 ո. խաղող 2 ո. սիսեռ, Տ. Չորոհի Մեխիբեան 3 ո. պանիր, 1 սիսեռ թարխանայ, Պ. Գ. Մալեան 120 ո. ալիւր:

Տեղական Լուրեր

ՀԱՄԱՉԱՅՈՒՆ. ԿԱՆ յանձնառու ժողովը որ իզմիր պիտի հասնէր Չոր. Տարալիտի նախագահութեան տակ կը յուսացուի որ Որբաթ օր իզմիր պիտի հասնի: Ե՛լէ՛զ կունս Քարլը Մէնի, Իտալական բաժնը քովսէր և հիպատոսն այցելած է կուսակալին:

ՅԱՄԱՅՈՒՆ Հարթուան ընթացքին մէջ պիտի սկսին քիւլայ հէլլէիքի մէջ համաձայնական յանձնառու ժողովոյ աշխատութիւններն, օտարակառուցի վաստակներու խնդրանքները քննելու, որոնք տեղի ունեն տն Մայլա 15-ին: Այս յանձնառու ժողովոյ մէջ կը գանձուի Մէրէզի նախագահ ատենի նախագահ Պ. Էրեզի Զարիմաթիս: Անմիջպէս որ օտարակառուներու խնդրանքներուն քննութիւնն պիտի վերջանայ պիտի սկսի թրքականակներուն վաստակ քննութիւնն, որ պիտի մասնակցի նաև կուսակալին կողմէ անւանուած թուրք մը:

ՀՐԴԻՆԵՆԻՐ սկսան ծայր տալ, այսպէս առաջի օր Չարմաթ ֆուրուսի կողմ փոքրիկ հրդեհ մը, երկ աստուած. Ս. Կին Սաքաթիլիան փողոց ուրիշ մը և ժ. Յին թրքաց թաղը աւելի մեծ հրդեհ մը որ 70 աուն հրոյ ճարակ կ'ընէր, հակառակ « վերօֆի, Տուրիս»-ի նա ազնիւրու հասուցած օգնութեան:

ՀԵԼԼԷՆ ՊԱՐՆԱԻՐԻՎԱՆ
ՅԱՆՉՆԻՆՈՒԹԵՂԵՆ
Իզմիրի հէլլէն բանակի պարենաւորման յանձնարարներն կողմէ կը ծանուցուի թէ մինչեւ օգոս. 10 (հ. տ.) կ'ընդունուի յատակի կաշի (քէօսէլէ) համար մուտուցումներ:
Առաջարկները գրաւոր պէտք է ըլլան նոյն շաբաթով միասին Պէտք է նաև իր կատի ունենալ որ մատուցանելի կաշիները պատրաստ ըլլալու են անմիջպէս յանձնելու համար:
Պարենաւորման տեսուչ
Տեղակալ ԼՈՒՐԱՔԱՔԱՅԻՍ
Իզմիր 5 Օգոստոս 1919

ՄԵՏ ՊԱՆԴՈՒԿ ԵՒ ՍԻՃԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳՍՅՈՆ
Թ. Ա. Պ. Ա. Ս. Է. Փ. Ո. Ղ. Ո. Ց
Բազմալանց քաղաքէն Կէօզ
Յարգող յանձնարարց ստան տեսակ հանգամանքներն միջոցները նկատի առնելով, մաքուր և նոր անկողին և մահճամաշիններով կահուութեամբ, մասնաւորներու և ընտանիքներու սենեակներ պատրաստուած են:
Յիճիֆաի հոգակաւոր օգին և այլ ըմպելիներ ու համեղ մէղքներ, շատ պատուական թէմպէքիէ կլկակ և մաքուր սպասարկութիւն:
Ամուրիներու վարձու սենեակներն Պատուաւոր և վարձուեցան սպասուէր մը կ'ուզուի:
Տրքուհի
Մ. ԲՈՐՆԻՃԵԱՆ ԵՒ ԸՆԸ.

Թուսիոյ նահանգային ժողովներն միացած են շարունակելու համար իրենց պայքարը Պոլլէվիքներու դէմ:

— Ռէվալի կառավարութիւնը ընդունած է էսթրոնիոյ ինքնավարութիւնը: էսթրոնիական զօրքերը թիւով 60,000 պիտի օչնեն Ռէվալի կառավարութեան:

— Չոր. Բիւրի Կ Հոտ հասած է: Չորալար թափաւորին հիւրը պիտի ըլլայ:

— Համաձայնականներն որոշած են զենքէկէց ընել հուղարական զօրքերը, կարգ կ'ունեն հաստատել և շմլմատել ներքին խնդրոց: Այս մտօք հրահանգ տրուած է համաձայնական զօրապետնե ուն:

— Պարսից շահը հասած է Պոլլիս և Բիւնքիթի մէջ իրեն յատկացուած պալատը իջնանած է, Վեհ. Սուլթանը իր ներկայացուցիչը զրկած է ընդ առաջ, իսկ պարսիկներն շոգեմակոյթներով գիմաւորած են շահը բերող անգլիական մարտանաւը:

— Համաձայնականներն իրենք և Չուկէտի և Տանիւրաքաի իւր գեսպանութիւնները և այդ պաշտօնն կիրարկելու համար որոշած է Լա Հէյի գեսպանը:

— Ահմէտ Բիզա պէյ որ բանտարկուած էր, հարցաքննուելով ազատ արձակուած է:

— Սելանիկի և Պելլորատի երկաթուղոյ յարաբերութիւններն վերսկըսած են:

— Կովկասի յոյներու պատուիրակներն հեռագիր մը ուղղած են Համաձայնական օգնութիւն խնդրելով համաձայնական պետութիւններէ, յոյն ժողովուրդին համար որոնք կը հարստահարուին Էրզրումի հրոսախուժներէն:

— Մայրաքաղաքի անգլիական թիւթ մը զոհուակուութիւն կ'յայտնէ այն միջոցներուն համար որ ի գործ զրած է օսմ. կառավարութիւնն հրոսախուժ բերու ցրումին համար աւելցնելով որ՝ բոլոր թուրքերն պէտք է համախուժուին աշխու կառավարութեան շուրջ: Թէ անձնական հարցերն մէկ կողմ դրուելու են, որովհետեւ վնաս կը պատճառեն ազգային շահերու: Վասնզի ենթարկուած նաև մը նաև պիտի պէտք է թուրք զոյն սպառելու աշխատութիւնները: Իւ անմիջպէս որ հրոսախուժներն պիտի ցրուուին, անդորրութիւն պիտի տիրէ երկրին մէջ: Այդ հրոսախուժներն պէտք է ըմբռնեն թէ իրենց ընթացքով կ'վտանգեն պետութիւնը:

Հ Ր Ա Ի Է Ր

Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան անդամները կ'հրաւիրուին ներկայ գտնուիլ, այս երեկոյ Ս. Մեսրոպեան վարժարանի մէջ ժամը 7ին անգլիական կողմէ ժողովին:

Ս. Գ. Հ. Կուսակցութեան իզմիրի Մասնաճիւղ

«Զարթօնք» լատինական մրութեան գրական հասարակութիւնը տեղի պիտի ունենայ վաղը 21 Օգոստ. Եջ. ժամը 8 րին (կ'ու.) Երեթ քաղաքի մէջ և էր Կէրէ քաղաքի մէջ:

ՊԱՏՅԵՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ
ՄԵԼԵՍ ԱՍՏԱՆ. ԽԱՏՐԱՆԻ ՄԵԺ
ԳԵՏԵՐԻՔ

ԽԱՂԱՄՈՒԼԻ ՄԵՂ ԿԵԱՆՔԸ
ԶԳՒՅՍՏՈՒՆ ՅՈՒՁԻԶ ՏՐԱՄ
3 ԱՐԻՐ
Հայ Տրամբէի Իսթիլ Կոլէ
Վաղը 22 Օգոստ. ուր. ժամը 9,30ին
Միջնարարներուն նուագ
Գին տոմակի Ա. կարգ 50 դր.
Բ. կարգ 30 դր. Պոյ Սքաւթներուն
և փոքրերուն կէս զին:

Վ Ե Ր Ջ Ի Ն Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Սուրհակ Սուրբ կ'հեռագրուի որ Մ. Նահանգներն ստանձնած են Հայաստանի յանձնառութիւնը և զօրք պիտի զրկեն Հայաստան անդորրութիւնը պահպանելու համար:

— Հայաստանի կացութիւնն քննելու համար պաշտօնն ունեցող զօրավարը որ Չոր. Բէրլինկի սպայակոյտի պիտի է, Հայաստանի կացութիւնն քննելէ յետոյ Ամերիկա Հայաստանի մասին իր որոշումը պիտի տայ:

— Իտալիոյ վարչապետը Մր. Նիթիի տեսակցութեան մը մէջ յոյս յայտնած է որ Մր. Ուիլսոնը Հայաստանի Իտալիոյ իրաւունքներն պաշտպանելու Մ. Նիթիի կ'յոշուայ թէ Ամերիկա նմանապէս տեսեալպէս պիտի օչնէ Իտալիոյ:

— Պոլսոյ մէջ ձերբակալութիւնները կը շարունակուի, երէկ կարգ մը անձեր բռնուած են, որոնցմէ Հատիք ձեռնկապերով բանտ առաջնորդուած են:

— Փոքր Ասիոյ Ամերիկեան յանձնարարները մեկնած է և Ալի Նատիր փաշա կարգ մը առաջարկներ ըրած է յանձնարարներին:

— Բարիզէ հասած հեռագրներու համեմատ Վէնիզէլոս Հայաստանի համաձայնական տեսակցութիւնը կ'ընդունուի վերջնական կարգադրութիւնները: Մ. Ուիլսոնը Հայաստանի կացութիւնը կ'ընդունուի պաշտօնը տուած է Չոր Հայաստանի զօրավարը Պրէսթէն մեկնած է Պոլլիս. ուր քիչ կը մնալէ յետոյ պիտի ուղեւորի Հայաստան Չորաւարը մասնագէտ հետեւորդներ ևս ունի իր ետ:

ԹԵՆՏՈՐՈՍ ԲԱՍԽՆՈՒՏԻՍ

ՋՐԱՐՈՒԹԱԿ Ն ՀԱՍՏԱՍԹԻՒՆ
ԵՒ ԲԱՂՆԻՔՆԵՐ
Ջրարուժութիւնը մարթը կը մաքուի, արտաշնութիւնը կը զիւրացնէ, արեան շրջանը կը փութացնէ և մարմնոն անգամալոյծ մասերուն ոյժ և առողջութիւն կը պարգեւէ:
Լոգանք ծծմբային } ըլլամթիզմի հմբ. « պարէզ }
տաք և պաղ տուշը կիներու և այրերու համար առողջութիւն է:
Բէրլինի ճատտէսի նոր փռան դէմ Ֆրնարգ փողոց թիւ 19-32:
Հազար ֆրանք տուժելու պատրաստ է, կ'է հաստատել յաջողին թէ վնասակար է առողջութեան համար տուշը:

Հ Ե Լ Վ Է Ց Ի Ս
ՀՐԴԵՂԻ ՋՈՒԹԻՐԻԱԿԱՆ
ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Հաստատուած 1861ին
Անմիջական հատուցում վնասուց և նպաստաւոր պայմաններ
Ընդհ. ներկայացուցիչ Իզմիր
ԱԻԵՏԻՔԻԱՆ ԵՂՔԱՐԻՔ

4. Պոլլիս 21 Օգոստոս 1919
Սուրհակ Սուրբ կ'հեռագրուի որ Մ. Նահանգներն ստանձնած են Հայաստանի յանձնառութիւնը և զօրք պիտի զրկեն Հայաստան անդորրութիւնը պահպանելու համար: